ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/23, 19.02.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ Ռուբեն Վլադիմիրի Հակոբյան

Պատվիրատու՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարիքների համար ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացրած հայտը մերժելու մասին որոշումը և սույն որոշումից հետո կայացրած այլ որոշում:
2. Պարտավորեցնել «ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի հայտը գնահատել ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ
Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված
բողոքների քննող անձին
ՀՀ ք. Երևան Մ. Մաշտոցի 40 շենքի
բն. 2 հասցեում բնակվող
Ռուբեն Վլադիմիրի Հակոբյանից
ՀՎՀՀ 37418732
Հեռախոս 077960088

ԴԻՄՈՒՄ - ԲՈՂՈՔ

1. Ռուբեն Վլադիմիրի Հակոբյան
2. Ք. Երևան Մ. Մաշտոցի 40 բն. 2 /07796-00-88/
3. ՀՎՀՀ 37418732
4. Արդշինբանկ ՓԲԸ հ/հ 2470101258770010
5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ պետական հիմնարկ
6. <<ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1>> ծածկագրով ընթացակարգ
7. Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռք բերում

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ պետական հիմնարկի կողմից 23.01.2019թ. ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպվել է <<ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև անհատ ձեռներեց Ռուբեն Վլադիմիրի Հակոբյանը: Վերջինս 04.02.2019թ. գնահատող հանձնաժողովի N 2 արձանագրության համաձայն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:
Այնուհետև, աճուրդի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեյի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:
Ի պատասխան հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է տեղեկանք, համաձայն որի անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա 31.01.2019թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեյի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 33000 ՀՀ դրամ: Այնուհետև <<ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի 13.02.2019թ. թիվ 3 Արձանագրության անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանի հայտը գնահատել են անբավարար և մերժել են:
Միաժամանակ տեղեկացնում եմ, որ անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանի առկա ժամկետանց հարկային պարտավորությունը՝ 33000 ՀՀ դրամն առաջացել է <<ՀՀ Պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարներից:
Հարկ եմ համարում նշել նաև, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 19.07.2017թ. թիվ 228-Ն հրամանի սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն <<ՀՀ Պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարները առհասարակ նշված չեն:

6786-13
13.02.2019թ.

Հայտնում եմ Ձեզ, որ երբևիցե տեղեկացված կամ ծանուցված չեմ եղել <<ՀՀ Պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների առկա պարտավորության մասին:

Տեղեկացնում եմ Ձեզ նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն անհատ ձեռներեց Ռուբեն Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեյի գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի: Կից ներկայացվում է քաղվածքը:

Տեղեկացված եմ, որ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1 կետի գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Սակայն գտնում ենք, որ վերը նշված դրոշմանիշային վճարները չեն համարվում հարկային պարտավորություն և չեն կարող խոչընդոտ հանդիսանալ Ա/Ձ-ի հետագա գործընթացի համար: Հարկ եմ համարում նշել նաև, որ վերը նշված պարտքը դրոշմանիշային վճարների գծով Ռուբեն Հակոբյանի կողմից վճարվել է տեղեկանալու հաջորդ օրը: Կից ներկայացվում են նաև վճարման անդորրագիրը: Եվս մեկ փաստ, որ տեղեկացված լինելու դեպքում այդ վճարների գծով առկա պարտքը ևս մարված կլիներ ժամանակին:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին և դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն խորհուրդը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով գտնում ենք, որ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի, որ տվյալ դեպքում <<ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից,

Գտնում ենք, որ Ա/Ձ Ռուբեն Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ իրոք հարկային պարտավորություններ չի ունեցել և հիմք ընդունելով հարկային հաժվետվությունների էլեկտրոնային համակարգում առկա տվյալները՝ պարտավորությունների բացակայության պարագայում, հայտ է ներկայացրել և մասնակցել վերը նշված էլեկտրոնային աճուրդին:

Ներկայացված բողոքով խնդրում եմ

1. Պարտավորեցնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ պետական հիմնարկի կողմից 23.01.2019թ. ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռք բերման նպատակով <<ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.02.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով հայտը մերժելու մասին կայացրած որոշումները և սույն որոշումից հետո կայացրած այլ որոշում:
2. Պարտավորեցնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ պետական հիմնարկի կողմից 23.01.2019թ. ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռք բերման նպատակով <<ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի հայտը գնահատել ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

Կից ներկայացվում են՝

1. Ա/Ձ Ռուբեն Հակոբյանի նույնականացման քարտի պատճեն.
2. <<ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի թիվ 2 արձանագրության օրինակը.
3. <<ՄԻՊԱ-ԷԱՃԾՁԲ-19/19-1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության օրինակը.
4. ՀՀ Ֆինանսների նախարարության 900008000482 հաշվեհամարին փոխանցված 30000 ՀՀ դրամ բողոքարկման վճարի անդորրագրի պատճեն.
5. Դրոշմանիշային վճարի 33000 ՀՀ դրամ / ոչ հարկային պարտավորության գծով/ վճարային անդորրագրի պատճեն.
6. ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի անձնական հաշվի քարտի քաղվածք 31.01.2019թ, դրությամբ

Դիմող Ռուբեն Հակոբյան